ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

7 հունիսի 2016 թվականի **թիվ 62** քաղ. Մոսկվա

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ 710 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 9 հավելված) 4-րդ կետին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 5-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 15-ի «Մաքսային միության «Երկաթուղային շարժակազմի անվտանգության մասին», «Արագընթաց երկաթուղային տրանսպորտի անվտանգության մասին» եւ

«Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգերն ընդունելու վերաբերյալ» թիվ 710 որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 7-ի
թիվ 62 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ 710 որոշման մեջ կատարվող

1. 2.2-րդ եւ 2.4-րդ ենթակետերում «արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման)» բառերը փոխարինել «տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության» բառերով:

2. 2.6-րդ ենթակետում՝

ա) «տրանսպորտի ենթակառուցվածքի անվտանգության եւ» բառերը փոխարինել «տրանսպորտի ենթակառուցվածքի անվտանգության» եւ» բառերով.

բ) «արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման)» բառերը փոխարինել «տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության» բառերով:

3. Ստանդարտների ցանկը, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է նշված որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության «Երկաթուղային շարժակազմի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը, լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով.

172	5-րդ կետի «ա» - «գ», «ե» - «ժդ», «ժէ», «ի» եւ «իը» ենթակետեր, 4-րդ հոդվածի 7-րդ, 12-րդ, 22 - 24-րդ, 28-րդ, 33-րդ, 39-րդ, 41 -46-րդ, 49-52-րդ, 55-րդ, 58 - 63-րդ, 69 - 72-րդ, 74 - 76-րդ, 79-րդ, 92-րդ եւ 95-րդ կետեր	ԳՕՍՏՌ 56286-2014-ի Ա-Զ հավելվածների 4-րդ բաժին	Հեղուկացված բնական գազով աշխատող մանեւրային գնացքաքարշեր: Ընդհանուր տեխնիկական պահանջներ	
173	5-րդ կետի «ա» - «գ», «ե» - «ժէ», «ի», «իը», «իժ» ենթակետեր, 4-րդ հոդվածի 7-րդ, 12-րդ, 13-րդ, 22-25-րդ, 28-31-րդ, 38-րդ, 39-րդ, 41 - 46-րդ, 49-51-րդ, 55-րդ, 59-64-րդ, 68-րդ, 71 - 73-րդ, 75-րդ, 76-րդ, 79-րդ, 92-րդ, 95-րդ եւ 96-րդ կետեր	ԳՕՍՏՌ 56287-2014-ի 4-րդ բաժին	Հեղուկացված բնական գազով աշխատող մագիստրալային բեռնատար գազատուրբաքարշեր: Ընդհանուր տեխնիկական պահանջներ	

4. Ստանդարտների ցանկում, որոնք պարունակում են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ նշված որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության «Երկաթուղային շարժակազմի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման եւ կատարման ու արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) համար անհրաժեշտ նմուշառման կանոնները՝

ա) անվանման մեջ «արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման)» բառերը փոխարինել «տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության» բառերով.

բ) 8-րդ դիրքի 2-րդ վանդակը լրացնել «5-րդ կետի «ժդ» ենթակետը եւ 4-րդ հոդվածի 60-րդ կետը» բառերով.

գ) 77-րդ դիրքի 3-րդ վանդակում տեքստը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝ «ԳՕՍ Ռ 55513-2013».

դ) 83-րդ դիրքում՝

2-րդ վանդակում ««դ» եւ «ժը» ենթակետեր» բառերը փոխարինել ««դ», «ե», «ժը» - «ժժ» եւ «իը» ենթակետեր» բառերով.

3-րդ վանդակում «ԳOUS» բառից առաջ տեքստը լրացնել «8-րդ բաժին, 1-ին աղյուսակ» բառերով.

ե) 85-րդ դիրքում 2-րդ վանդակի ««ժ» եւ «ե» ենթակետեր» բառերը փոխարինել ««ե» եւ «ժ» ենթակետեր» բառերով.

զ) 101-րդ դիրքում՝

2-րդ վանդակում «14» թվից հետո տեքստը լրացնել «, 22» թվերով.

3-րդ վանդակում «ԳOUS» բառից առաջ տեքստը լրացնել «7-րդ բաժին» բառերով.

է) 131-րդ դիրքում՝

2-րդ վանդակում տեքստը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5-րդ կետի «ժդ» ենթակետ, 4-րդ հոդվածի 39-րդ, 40-րդ, 59-րդ, 92-րդ եւ 93-րդ կետեր».

3-րդ վանդակում «5-րդ բաժին» բառերը փոխարինել «3-րդ եւ 5-րդ բաժիններ, 1-ին հավելված» բառերով.

ը) 136-րդ դիրքի 2-րդ վանդակում տեքստը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝ «4-րդ հոդվածի 58-րդ, 59-րդ եւ 64-րդ կետեր».

թ) 155-րդ դիրքը հանել.

ժ) լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքեր՝

«163	5-րդ կետի «ժդ» ենթակետ, 4-րդ հոդվածի 59-րդ կետ	ԳOUS 32203-2013	Երկաթուղային շարժակազմ: Ակուստիկա: Արտաքին աղմուկի չափում: Վերաձեւակերպում ԳOUS Ռ (ԳOUSՌ 54061-2010)	
164	4-րդ հոդվածի 5-րդ կետի «իգ» ենթակետ	ԳOUS 32700-2014	Երկաթուղային շարժակազմ: Միակցվելիության վերահսկողության մեթոդներ	
165	5-րդ կետի «զ» ենթակետ, 4-րդ հոդվածի 49-րդ կետ	ԳOUS 32880-2014-ի 8-րդ բաժին	Երկաթուղային շարժակազմի կանգառման արգելակ: Տեխնիկական պայմաններ	

166	4-րդ հոդվածի 29-րդ կետ	ԳՕՍՏՌ 54959-2012-ի 7-րդ բաժին	Երկաթուղային էլեկտրակապ: Գնացքի ռադիոկապ: Տեխնիկական պահանջներ եւ վերահսկողության մեթոդներ	
167	5-րդ կետի «գ», «ժե» եւ «ժզ» ենթակետեր, 4-րդ հոդվածի 74-րդ կետ	ԳՕՍՏՌ 55176.3.1- 2012-ի 5-րդ բաժին	Տեխնիկական սարքավորումների համատեղելիությունը էլեկտրամագնիսական է: Երկաթուղային տրանսպորտի համակարգեր ու սարքավորումներ: 3-1 մաս: Շարժակազմ: Փորձարկումների պահանջներ ու մեթոդներ»:	

5. Այն ստանդարտների ցանկի անվանման մեջ, որոնք պարունակում են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ նշված որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության «Արագընթաց երկաթուղային տրանսպորտի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման եւ կատարման ու արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) համար անհրաժեշտ նմուշառման կանոնները, «արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման)» բառերը փոխարինել «տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության» բառերով:

6. Այն ստանդարտների ցանկի անվանման մեջ, որոնք պարունակում են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ նշված որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության «Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման եւ կատարման ու արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) համար անհրաժեշտ նմուշառման կանոնները, «արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման)» բառերը փոխարինել «տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության» բառերով: